

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Սույն թվականի մայիսի 18-ին, երեքշաբթի օրը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի նախաձեռնությամբ, Բուխարեստի առաջնորդարանի սրահում տեղի է ունենում ռումինահայ թեմի հոգևորականաց հավաքույթ:

Առավոտյան ժամը 10-ին, եկեղեցական արարողությունից հետո, հավաքույթն սկսում է իր աշխատանքները: Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի նախագահությամբ ատենապետ է ընտրվում Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, իսկ ատենադպիր՝ Տ. Ավետիս քհն. Մանդալյանը:

Հավաքույթին մասնակցում էին նաև Տ. Կոմիտաս աբդ. Հովնանյանը և Տ. Արամայիս աբդ. Շլուկյանը:

Հավաքույթի բացման խոսքով հանդես է գալիս առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոսը: Սրբազան հայրը նախ ողջունում է հավաքի մասնակիցներին և ապա հանգամանորեն ներկայացնում, թե ինչպիսին պետք է լինի բարձր գիտակցության տեր հայ հոգևորականի առաքելության ճանապարհը սփյուռքահայ գաղթօջախներում:

Հավաքի ընթացքում հոգևորականներից յուրաքանչյուրը մանրամասնորեն զեկուցում է մինչ այդ գաղութից ներս իր կատարած հովվական աշխատանքների, ինչպես նաև ապագա գործունեության ծրագրերի մասին:

Ժողովում որոշվում է նաև, որ հետայսու, երկու ամիսը մեկ, նմանօրինակ հոգևորականաց հավաքներ գումարվեն տարբեր քաղաքներում՝ նպատակ ունենալով մոտիկից ծանոթանալ յուրաքանչյուր հոգևորականի գործունեության հետ՝ հնարավոր եղբայրական օգնություն ցուցաբերելու և թերին ու պակասը լրացնելու ճանապարհներ որոնելու մտադրությամբ, որպեսզի առավել ծաղկի ռումինահայ ազգային-եկեղեցական ու մշակութային կյանքը:

Ժողովում որոշվում է, որ հաջորդ հավաքույթը գումարվի Կոնստանցա հայաշատ քաղաքում:

Հավաքույթից հետո տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում առաջնորդ Տիրայր սրբազանը իր գնահատանքին է արժանացնում ռումինահայ թեմում բոլոր հոգևորականների արդյունաշատ և ազգօգուտ գործունեությունը:

Այնուհետև ներկաները սրբազան հոր առաջարկությամբ բաժակ են բարձրացնում Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության, առողջության և բոլոր բարի ծրագրերի իրականացման համար:

Հավաքույթն ավարտվում է սրբազան հոր բարի մաղթանքի խոսքով, «Պահպա-

Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը իր թեմի հոգևորականներով

նիչ»-ով և խմբովին արտասանած «Հայր մեր»-ով:

Հոգևորականաց այս հավաքով մի նոր բովանդակալից էջ գրվեց ռումինահայ գաղութի պատմամատյանում:

*
* *

Առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի հրավերով, սույն թվականի ապրիլի 1-ին. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Բուխարեստ է ժամանում Տ. Կոմիտաս աբդ. Հովնանյանը՝ ստանձնելու համար Կոնստանցա քաղաքի և նրա շրջակայքի հայ համայնքի հոգևոր հովվությունը:

Հույսով ենք, որ Կոմիտաս հայր սուրբը իր ծառայությամբ կիրականացնի ինչպես Հայոց Հայրապետի, այնպես էլ առաջնորդ սրբազանի ու կոնստանցահայ համայնքի բարի ակնկալություններն ու հույսերը:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱԲԵՂԱ ՇԼՈՒԿՅԱՆ